ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ա. ԵՐԱՆՈՍՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով *Ա. Երանոսյանի* անձնական դիմումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նոր Հաճնի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Արարատ Երանոսյանին*** տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2019 թվականի հունվարի 30-ից մինչև փետրվարի 1-ը ներառյալ՝ *3* օր:

2. ***Արարատ Երանոսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նոր Հաճնի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ընկերության ընտանեկան բժիշկ ***Գայանե Խաչատրյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

2019 թվականի հունվարի 30
ք. Հրազդան
N 10-Ա